ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Քննության առնելով ժամանակի հասարակական հոսանքները հայացքը սևեռած ի մասնավորի մտավորականության ըմբռնումներին, Վահան Տերյանը տարորոշում է «ազգային ինտելիգենցիա», «բուրժուական ինտելիգենցիա» և մի երրորդ խումբ, որի դիրքորոշումներն ու համոզմունքներն արտահայտում է ինքը՝ չտալով դրան ոչ մի անուն ու որակում: Արդյո՞ք ոչ այն պատճառով, որ հայ իրականության մեջ նման հասկացությունները համարում էր խեղաթյուրված:

Գիտությունը հիմնավորում է բնության մեջ բացարձակ նույնականության անհնար լինելը, և գա համոզիչ է բառերի պարագայում ևս: Այն, որ բառերն ու բառակապակցությունները ենթադրում են անհատական ընկալում, Տերյանն արձանագրում է այսպես. «...Բառերն առանձնահատուկ նշանակություն ունեն նրանց համար, ով քեզ հարազատ է ու կհասկանա, իսկ ուրիշների համար գատարկ հնչյուն են, և հենց դրանից է, որ երբեմն ամենասովորական բառերը հանկարծ իմաստավորվում են, գառնում են խորունկ, լի գաղտնիքով ու հոգով, այնինչ սովորական էին, հասարակ, տափակ: Ամբողջը վերաբերմունքի խնդիր է»[1] և ապա՝ «...Ահա թե ինչու սոցիալիզմ, ազատություն և նման բառերը միանգամայն տարբեր նշանակություն ունեն տարբեր մարդկանց բերանում: Ոմանց համար այդ բառերը բովանդակություն ունեն, ուրիշների համար դրանք սոսկ գեղեցիկ ծաղիկներ են, անբովանդակ հնչյուններ միայն»[2]:

Բայց կան բառ-երևույթ-հասկացություններ, որոնց անհատական-կամայական ըմբռնումների ներքին սահմանները հարկ է որ համընկնեն, լինեն նույնական, եթե ոչ ամբողջ ազգի, ապա գոնե իր մտավորականության ըմբռնումով, այլև հոգում: Եթե այդ չկա էլ, դրա ձգտումն անպայման պետք է որ լինի: Մինչդեռ դարասկզբի հայոց մտավորականության իշխող հոսանքների միջև տիրում էր մի չափազանց տարորինակ այլակարծություն՝ հենց ամենաէական հասկացությունների առումով: Ինչպես Հայրենիք հասկացությունը, որ ներկայանում էր երեք՝ բավականաչափ տարբեր ըմբռնումով: Նախ ըստ երկուսի՝ Տերյանի օգտագործած որակումներով: Ազգային ինտելիգենցիայի հասարակական հայեցությունն ու դիրքորոշումը բանաստեղծի ձևակերպումով հանդում են ահա այս ելակետին. «Հայություն և Հայաստան ասելով՝ այդ ուղղության ներկայացուցիչները գրեթե միշտ Թուրքահայությունն են ըմբռնում և Թուրքաց Հայաստան»[3]:

---

[1] Վ. Տերյան. Երկերի ժողովածու չորս հատորով (այսուհետև՝ ԵԺ). հ. 4, Երևան, 1979, էջ 339-340:

[2] ԵԺ. հ. 3, Երևան, 1975, էջ 231:

[3] Նույն տեղում, էջ 105:

Պարզ է, նման ելակետով Հայաստանի և հայության մնացած մասերն անտեսվում են: Ուրեմն այս հոսանքի «Հայաստանին» վերաբերող բոլոր կամ գրեթե բոլոր մտածումների, նպատակների ու սպասելիքների կրողը Հայաստան-հայության մի, թեպետ շատ խոշոր, բայց հատվածն է :

Բուրժուական ինտելիգենցիայի հայեցակետից արդեն, փաստացի «Հայաստանը» զրկվում էր «հայ արվեստ», «հայ գիտություն», «հայ գրականություն» և ամենագլխավորը՝ «հայ ժողովուրդ» իմաստներից, ասել է՝ հոգևոր էությունից: Մնում էր ուրեմն սոսկ տարածքի անունը, ուրեմն և նպատակների տարբերությունը՝ «Հայաստանի ապագա» հասկացության անորոշ, հեղհեղուկ տարիմաստությամբ: Ըստ այդմ, առաջին մտայնության ելակետից հետևում էր նաև, որ Հայաստանի մշակութային կենտրոնները Վանը, Էրզրումը, Մուշն են: Ասել է թե՝ ենթադրվում էր և գերադրական հավատ թուրքահայերի կուլտուրական վճռական դերին հայության կյանքում. ասել է թե՝ ամբողջ հայության ապագայի հարցը կապված է առավելապես թուրքահայ խնդրի լուծման հետ. գումարած «ազգի կուլտուրական ապագայի հարցի լուծումը» թուրքահայկական հարցի լուծման սահմաններում: Հետևաբար՝ եթե թուրքահայ խնդիրը չլուծվի, պետք է զուր համարել Հայաստանի ապագայի հետ կապված գրեթե բոլոր հույսերը:

Բուրժուական ինտելիգենցիայի ելակետի ստուգաբանությունն ավելի կարճառոտ է. «Հայաստանի ապագա» ասել է՝ հայկական (ո՛չ հայոց) պետության ստեղծում: Պարզենք ասվածը: «Դեռ սրանից մի երկու տարի առաջ,– շարունակում է բանաստեղծը,_ ես մի անգամ զրույց ունեցա մի այդպիսի հայ ինտելիգենտի հետ (թեպետ դեռ ոչ բոլորովին ապազգայնացած, սակայն այն ինտելիգենտներից մեկի, որոնք ոչ մի արժեք չեն տալիս այդպիսին կուլտուրային):

Երբ ես հարցրի նրան, թե ի՞նչ է վերջապես իր բաղձանքը, ինչու՞ է այդպես ջերմ ցանկանում, որ «Հայաստանն աղատվի» (Բալկանյան պատերազմի սկզբին էր տեղի ունենում զրույցը), վերջապես մի՞թե, հարցրի ես, ձեր բաղձանքն այն է, որ տեսնեք հայ ոստիկան հայկական համազգեստով... նա անհամբեր կերպով և կտրուկ ասաց.

_ Այո՛, հայ ոստիկան, հայկական համազգեստով...

Հետո ավելացրեց դրա վրա և այն ամենը, ինչ անհրաժեշտ կերպով կապված է այդ ոստիկանի գոյության հետ...

Սակայն ես ոչ մի խոսք չլսեցի հայ կուլտուրայի մասին, հայ արվեստի, գրականության, հայ գիտության, վերջապես հայ ժողովրդի մասին...»[1]: Անհուն ցավով և ազնիվ ցասումով է արձանագրում բանաստեղծը թե՛ մեկ, թե՛ մյուս մտայնության արդյունքներն ու հետևանքները՝ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ հանրագումարով՝ որպես բնորոշ եղելություն վկայակոչելով «Поэзия Армении»-ի օրինակը՝ մտավորական խավերի ընկալումով և ընդունելության մակարդակով. «Ասում են (Տերյանի բառերով ասած ազգի համար «հոգս քաշող» հայ ինտելիգենտ-հայրենասերները – Մ. Ս.). ամեն տեղ իրենց պոետներն ու գրողները կան, թող մենք էլ ունենանք, թե չէ մենք ինչ ազգ ենք, եթե չունենք մեր պոետներն ու

[1] Նույն տեղում, էջ 108–109:

գրողները: Բայց պոեզիան ինքնին կամ գրականությունը – նրանց բոլորովին պետք չէ: Դա նրանց հարկավոր է, որպեսզի օտարերկրացիների հետ զրուցելիս ասեն, որ ահա մենք էլ ունենք «մեր Նեյտոնները» (Նյուտոններ – Մ. Ս.), մեր Թումանյանները և այլք: Այդ զգացմունքի աստառը գազրելի է, ե դա նողկալի զգացմունք է: Ահա այդ զգացմունքով էին ղեկավարվում նրանք, ովքեր Մոսկվայում նախաձեռնեցին «Поэзия Армении»-ի հրատարակումը, այն մարդիկ, որոնք հայ պոեզիայի ծագկման համար չէին կարող նույնիսկ 2-3 հազար ռուբլի ճարել (հիշիր «Գարունը»), իսկ «ազգային» սնապարծության համար չափսոսացին և գտան համարյա 15 հազար (մի «Поэзия Армении» գրքի համար): «Պոեզիա Արմենիի» տողացի թարգմանությունների մեկ մամուլի համար մեզ վճարում էին 40 ռ., իսկ մեր բանաստեղծությունների համար, որ նրանք թարգմանում էին, մեզ ոչ մի կոպեկ չէին վճարում: Այդ մարդկանց հարկավոր է հայկական թաղային ոստիկան, իսկ մեզ՝ ոչ: Ահա տարբերությունը»[5]:

«Հայկական թաղային ոստիկանի» գոյության երաշխիք Հայաստան անունը կրող պետությունն Տերյանը չի ընդունում, որովհետև սոսկ նվազագույն իմաստային պարունակություն, կշիռ ասլահովող այս «Հայաստան»-ի և շատ ու շատ նեղ, սահմանափակ «պետության» համադրության արդյունքն իր աշխարհընկալումով բացարձակապես հեռու է լուրջ հասկացողությունից: «Հայաստան»-ի տերյանական «ստուգաբանությամբ» «պետությունն»-ը է կամ պիտի լինի ազգային համախմբում, միացյալ ամբողջացում ոգջ ներուժի առավելագույն արդյունավետ օգտագործում հանուն զարգացման ու առաջընթացի. հավասարապես թե՛ մշակութային և թե՛ տնտեսական-քաղաքական հզորացման առումով: Իսկ վերը արծարծված «պետության» բովանդակությունը յուրօրինակ մտային հորինվածք է, որը և, ինչպես խոսքով, այնպես էլ գործով Տերյանին պատկերանում է իբրև սնապարծություն ու փառամոլություն՝ կոչված հազուրդ ու դոհացում տալու ազգային ջոջերին: Էապես ահազանգի վերաճող-հնչող Տերյանի ցավ ու զայրույթի հիմքը նման բաղձանքի աստառն է: Մինչդեռ ներքին-բուն էությունը, սկզբնաղբյուրը ինքը կոչում է «ազգային» սնապարծություն՝ ազգային բառը չակերտներով՝ ասես գերծ պահելու համար բառը այդչափ իմաստազրկում-վարկաբեկումից: Աղետ, որը մեր բոլոր ժամանակների ճշմարիտ մտավորականները հնչեցնում էին սթափեցնող ահազանգով, ներառյալ Պարույր Սևակը՝ համեմատաբար ավելի խաղաղ ու հանդարտ ժամանակներում: «Ազգային ինքնասպանության զանազան ձևեր կան,– դրում է նա,– և դրանց մեջ ամենադյուրինը, ըստ իս, իմ ասած սնապարծությունն է, որ նման է տաք ջրով լեցուն լողարանի մեջ սեփական երակը կտրելուն»[6]: Ուրեմն և որքան ու որքան աղետալի և կործանարար պետք է լիներ այն՝ հայ ժողովրդի համար բոլոր առումներով խառնակ ու դժնի տարիներին: Հավելենք, որ սնափառությամբ ախտահարվածները հաճախ էլ ինքնակոչ ստանձնում էին ժողովրդի ներկայացուցչությունն ու ղեկավարությունը՝ բազմապատկելով բանաստեղծի ողջակիզվող հոգու կսկիծը: Տերյանը, տարակույս չուներ, հաստատ համոզ-

[5] Եժ. հ. 4, էջ 291:
[6] Պ. Սևակ. Երկերի ժողովածու 6 հատորով. հ. 5, Երևան, 1974, էջ 295.

ված էր՝ սնավառության համաճարակը չկանխելն ուղի է ստույգ կործանումի-ինքնաոչնչացման՝ և՛ հոգևոր ու բարոյական, և՛ նյութական ու ամենասարսափելին՝ ֆիզիկական. քանզի Էմերսոնի հավատամքն իր հավատամքն էր. «Ազգը չի կարող կործանվել այլ կերպ, բացի ինքնասպանությունից»[7]: Եվ ուրեմն՝ այլօրինակ խախուտ-անհաստատ ավազե հիմքի վրա կառուցվելիք հայոց տան՝ հայոց պետության գոյությանն ու հարատևմանը Տերյանը պարզապես հավատ չի ընծայում դավանելով դարերի փորձությունների դիմակայած «Տունը հիմքով է տուն» ճշմարտությունը: «Տունը», որ համարժեքների մի շղթա է մեր լեզվում «երկիր»-«ազգ»-«տոհմ»-ով: Ժայռեղեն հիմք-հիմնասյուներով տունը միայն կարող է դիմակայել տարատեսակ խորշակների, փոթորիկների, որպիսիք հայոց տան գլխին մշտառկա են:

Իր հայեցակարգը հրապարակելը Տերյանը սկսում է մի կարևոր հայտարարությամբ. «...Ինձ համար միանգամայն անընդունելի էր այդ կոնցեպցիան ոչ միայն իբրև մտածողություն, այլև իբրև զգացողություն»[8] (խոսքը վերաբերում էր ազգային ինտելիգենցիայի՝ Հայաստան-Թուրքահայաստան, հայություն-թուրքահայություն նույնությունն ընդունող հիմնահարցին): Տասնամյակներ առաջ Կարին-Էրզրումից տեղահանված արևմտահայ նախնիների փորձով ու փորձառությամբ սնված համակշիռ մտածողության ու զգացողության ներդաշնակ համաձուլվածքից սերած Հայաստան-հայրենիք ամբողջությունն է իր երազած պետություն-պետականությունը՝ անտրոհելի, անմասնատելի, անանջատ, երևութական-աներևույթ տարաբնույթ անթիվ կապերով փոխպայմանավորվող, փոխազդող բաղադրիչների անուրանալի, աննահանջ դաշնությամբ: Ինչպես և հայ ժողովուրդ՝ առանց «ռուսա-», «տաճկա-»-ի: Այստեղից «հայության ապագա»-ի և «թուրքահայության ապագա»-ի միջև դրված հավասարության նշանի միանշանակ մերժումը, որից և հետևում է տարակարծությունն ու կասկածը թուրքահայ կուլտուրայի ապագայի հանդեպ՝ ի տարբերություն համողված լավատեսների: Իսկապես զարմանալիից զարմանալի «զգացողություն»...

Ուրեմն և վերստին Տերյանը դառնում է հարցադրման հանգույցին. այն է թե՝ հայության մի, որքան էլ ուզում է մեծ, խոշոր մասի մշակութային փայլուն ապագայի ապահովումը բնավ չի կարող նշանակել հայություն-ամբողջի մշակութային ապագայի ապահովում: Եվ տարակարծությունների քառսից «հայտնաբերված» կարծիքների ու նպատակների համադրումով կարծես թե ինչ-որ չափով բացվելով-հստականում է տարակարծությունների կծիկը՝ արժանանալով փարատում հիշեցնող այսպիսի եզրակացության. «...Ուզիր թե սխալ՝ վերը հիշածս իդեոլոգիայի (ազգային ինտելիգենցիայի – Մ. Ս.) ներկայացուցիչները այնուամենայնիվ ունեին իրանց առջև մի ուղեցույց աստղ՝ հայության ապագան, որ ինձ համար էլ կենսական ու կարևոր, այժմեական ու հրատապ էր թվում, ինչպես թվում է և այժմ»[9]: Եվ սակայն, եթե առաջինների մտահոգությունները վերաբե-

---

[7] *Աֆորիզմներ. Երևան, 1989, էջ 26:*
[8] *Եժ. հ. 3, էջ 106:*
[9] *Նույն տեղում:*

ում էին հայության կուլտուրական ստացվածքների, հոգեկան ինքնության հարցերին, նպատակն էլ հանգում էր հայության կուլտուրայի ապագայի ապահովմանը, ապա սեփական գերզգայուն հոգով հարազատ ժողովրդի ֆիզիկական գոյությունն ապահովելու հոգսով-կսկիծով չնչահեղձ Տերյանը բացահայտորեն ազդարարում էր թե՝ «Հայության ֆիզիկական ապահովության մասին խոսողները պակաս չահագրգռված չեն հայության կուլտուրական և հոգեկան ստացվածքների վերաբերմամբ»[10]:

Սա ասված է 1914 թ. «Մշակի» 293 - 296 համարներում (դեկտեմբերի 26, 27, 28, 30) տպագրված «Հոգևոր Հայաստան» հոդվածում, որի անհրաժեշտությունը թելադրված էր նաև իր հասցեատեր լինելով. ասել է թե՝ պատասխան էր ազգային մտավորականների վրդովմունքի: Վրդովմունք, որ հետևել էր «Մշակի» ավելի վաղ համարներից մեկում (1914-ի № 220) տպագրված «Մեր պարտքը» հոդվածում չեշտադրված հարազատ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովման մտատանջությանը. «Ես չեմ տարակուսում և ոչ մի վայրկյան, որ փորձության, գուցե բոլոր մինչև այժմ եղածներից ամենից ահավոր, գուցե ճակատագրական փորձության այս բովից պատվով սլիտի դուրս գա հայ ժողովուրդը:

Սակայն հարկավոր է, որ մեր ժողովուրդը իր սլատիվը պահպանելով հանդերձ պահպանե և իր գոյությունը: Այսօրվա ահավոր կռվի սկզբից իսկ մեզ բոլորիս համար պարզ է այն գուցե և դառն, սակայն ակներև հանգամանքը, որ մեր առջև դրված է ոչ միայն մեր ազգային կուլտուրական ապագայի հարցը, այլ հայ ժոզովրդի սոսկ ֆիզիկական գոյության խնդիրը»[11] *(ընդգծումը՝ Մ. Ս.):*

Իսկապես. որպիսի՜ մարգարեական գերզգայական կանխազգացողություն...

Իրոք. եթե հնարավոր լիներ մի հոդվածով, մի բանաստեղծությամբ, մի գրքով ասել ամեն ինչ՝ ամբողջական ու ամփոփ, չէին գրվի հաջորդական մյուսները: Եվ քանի որ այդպիսիք կան, գրված են, հիմք ընդունելով Տերյանի սկզբունքայնությունը, անմնացորդ անկեղծությունն ու մտածել-արտահայտվելու եղանակը՝ պարտավոր ենք ոչ թե փնտրել չեղյալ հակասություններ, այլ համադրելով փորձել ամբողջացնել, ավելի ճիշտ՝ ի մի բերել ամբողջականը: Նամանավանդ, որ ինքն էլ զգուշացնում է. «Հակադրություն չկա այստեղ, այլ ընդհակառակը համադրություն կա, քանի որ ֆիզիկականի մասին հոգացողները ևս հայության ապագայի խնդրով են զբաղված»[12]*: Վերստին վերադառնանք, ուրեմն, համադրություններին: Ի դեպ, Տերյանի երկերի ժողովածուի (Պողոս Մակինցյանի խմբագրությամբ լույս տեսած) առաջին հրատարակությունից հետո «Մեր պարտքը» այլևս չի վերադարձել հաջորդ հրատարակություններում: Մինչդեռ այդ հանգամանքը մեծապես վնասել է բանաստեղծի քաղաքացիական-հայրենասիրական դիմապատկերի ամբողջականությանը:*

---

[10] Նույն տեղում:

[11] Վ. Տերյան. Երկերի ժողովածու 4 հատորով. հ. 4. Երևան, 1925. էջ 196–197. Բնորոշ է, որ այդ հոդվածը սկզբնապես առիթ է տվել մեղադրելու հեղինակին ժողովրդի «ֆիզիկական» գոյության մտահոգության համար, ամիսներ անց էլ «Հոգևոր Հայաստանը» դիտվել է իբրև «հոգևոր-մշակութային»-ի անվերապահ բացարձակություն հաստատող և դարձել ձևական բանակռիվների առարկա:

[12] Եժ. հ. 3, էջ 107:

Բաժան-բաժան հայության գոյության կենսական խնդիրները, ժողովրդի բախտում ճակատագրական արյունոտ Առաջին աշխարհամարտի շեմին և դրա ընթացքում նրա լավագույն զավակներին պարտավորեցնում-պարտադրում էին ի լուր համայն հայության ազդարարել-գուժել պահի ճակատագրական լինելը. երիցս, բյուր անգամ ավելի ու ավելի ուժգնացող ձայնով կրկնելով իրենց մտահոգություններն ու տագնապները, հավատամքսլատգամները... ըստ էության անփոփոխ ու միևնույնը բոլոր ժամանակներում, որ Չարենցի սեղմ-կուռ ձևակերպումով ղողանջում է «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» դաղտնագրով:

Համանման հանգամանքներում Տերյանը նույնպես զգում էր պատասխանատվություն ու անհրաժեշտություն (բայց և ուներ հնարավորություն) մի քիչ ավելի ծավալվելու և հարազատ ժողովրդին ու մտավորականությանը ներկայացնելու. «Ահա մեր աչքի առջև հսկա ժողովուրդները ֆիզիկական և բարոյական գերագույն լարումով, բարձր ոգևորությամբ միացնում են իրենց տարբեր խավերը, տարբեր հատվածները, որպեսզի փրկեն իրենց ապագան»[13]: Սա էր ահա փրկության միակ ճանապարհը, եզակին, ծայրաստիճան անհրաժեշտը, որ պիտի գիտակցվեր, դառնար հավատամք հայոց ողջ մտավորականության համար, քանզի. «Եթե հսկա ժողովուրդներն են կարիք ու անհրաժեշտություն համարում միահամուռ ու միաձույլ գործունեությունը, ապա որքա՜ն և որքա՜ն անհրաժեշտ ու անհետաձգելի պետք է համարվի այդպիսի մի համերաշխ ոգևորություն մեր փոքրաթիվ, բայց անհամար ոսոխներով շրջապատված ազգի համար, մի ազգի համար, որի ցլատված, քայքայուն ուժերի ծայրահեղ լարումը միայն, բարոյական բարձր պարտազդացումը միայն կարող է փրկել այս աղետալի պահին» [14]:

Եվ սա էր նյութական-բարոյական ուժերի գերագույն լարման, միահամուռ գործելու ժողովրդի ընդունակություն-պատրաստակամության ամենածանրակշիռ փաստարկը նրա հույս ու հավատի մշտանորոգ կենդանություն գլխավոր ու զորեղ գրականով հանդերձ: Ուրեմն և «բարոյական բարձր պարտազդացումով» բանաստեղծը հանուն ազատության հորդորում-թելադրում է ամեն տեսակ զոհաբերության պատրաստակամություն դիմելով հայ մտավորականությանը, և որ հատկանշական է, առաջին հերթին կոչելով ընդօրինակել զոհաբերության պատրաստ բուն «հասարակ ժողովրդից»: «Դառնանք մտքով դեպի մոտիկ անցյալը,– շարունակում է նա,– հիշենք այն հերոսական ճիգերը, որ գործում էին մեր հասարակ ժողովրդի լավագույն զավակները, հիշենք այն բարձր բոպեները, երբ ժողովուրդը անձնվեր սիրով պատրաստ էր ամեն ինչ զոհաբերելու իր եղբայրների ու իր ազատության համար, և կտեսնեք, որ հայ ժողովրդի հավատը կենդանի է, որ հայ ժողովրդի հոգին չեն սպանել ոչ ահեղ արհավիրքները, ոչ գարավոր ստրկության լուծը:

Ժողովուրդը անվերջ տառապանքի մեջ կենդանի է պահել իր մաքուր հավատը դեպի ազգի ապագան, դեպի լավագույն գալիքը: Որպես մի վսեմ

[13] Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 195:
[14] Նույն տեղում:

ցնորք, որպես դյութիչ մի երազանք նա փայփայել է ազատության և վերածնության բարձր բաղձանքը: Եվ որքա՜ն ու որքա՜ն ազնիվ սրտերի արյունով վկայել է ժողովուրդը իր այդ պայծառ հավատը... մի՞թե հարկավոր է ավելի ակներև, ավելի անհերքելի ապացույց մեր ժողովրդի բարձր զգացողության ե անձնվեր ոգևորության»[15]:

Դժվար չէ գուշակել, որ «մոտիկ անցյալ», «հերոսական ճիգեր» շեշտադրումներով Տերյանը վկայակոչելով հիշեցնում էր մեկը մյուսին հաջորդած հայոց հայդուկային շարժման սխրալի դրվագները: Բայց դրա կողքին միաժամանակ շեշանելով-շեշտում էր մտավորականության զգաստության ու պատրաստակամության հրատապությունը՝ պատմական ճակատագրական տվյալ պահին, պատերազմական արյունալի-ահեղ հանգամանքներում: Որքանով, ճշմարիտ է, որ ժողովուրդը հզոր ներուժ է, բայց ճշմարիտ է և, որ ինքնակառավարվող չէ: Հարկ է, ուրեմն, նախ՝ այդ ներուժից ստանալ կուռ և հզոր ուժ և ապա՝ հարմար ու անհրաժեշտ պահին, անհրաժեշտ ուղղությամբ պաշտպանվել ու պայքարել: Եվ «նախ»-ն ու «ապա»-ն այդ պահին իրականացնել-վավերացնելու պարտականությունը մեծ մասով պատկանում է հայոց մտավորականությանը՝ արձանագրում-հաստատում է Տերյանը՝ գրելով. «Ո՞վ պիտի կազմակերպե մեր ժողովուրդը, ո՞վ պիտի տանի նրան այն ճանապարհով, որ զոհաբերությունն ու արյունը աղատություն են բերում»[16]: Անհետաձգելի հարցերի իր աներկբա, միանշանակ պատասխանով. «Այսօր հայ մտավորականությանն է վիճակվում այդ բարձր, սակայն և ծանր պարտականությունը»[17]... Իսկ ցանկանու՞մ է, կարո՞ղ է, պատրաստ է նա իր ժողովրդի կյանքը, պատիվը, հավատն ու հույսը փրկել,— աշխարհամարտի նախասեմից ծագած տագնապալի հարցեր, ավա՜դ, անլուծելի:

Հիմնավորապես հասարակական-տնտեսական գիտություններ յուրացրած Տերյանն այնքան իրատես ու զգաստ մտածող էր, որ չէր կարող չիմանալ. «Հակամարտ ուժերի բախումով է առաջ ընթանում կյանքը». մարդու լինի, թե հասարակության, և ընդմիշտ վերացնել այդ բախումը թեկուզև ամենակազմակերպված, ամենահասուն հասարակության կյանքում թերևս, անհնարին է: Կան, սակայն, պահեր, երբ սպառնացող արտաքին վտանգ, աղետ հաղթահարելու միակ և եզակի ճանապարհ-միջոցը գիտակցելն ու գործակցելն է միայն այս նշանաբանով. արտաքին վտանգը ներքին բախման բոլոր կողմերի համար էլ կործանարար է. միակ ելքը, ուրեմն, հավատարմությունն է նշանաբանին:

Իր նամակներից մեկում Տերյանը գրում է. «Միայն մահն ու սերը կարող են կապել մարդկանց, մնացյալ ամեն ինչը տարբերում, բաժանում է...»[18]: Այսինքն, եթե անգամ չկա միավորելու ցանկալի-անհրաժեշտ նախապայման սերը, պետք է որ մահը ստանձնի այդ գերը: Տվյալ դեպքում ո՞րն է այսաստիճան մանրամասնելու, այսչափ ընդարձակվելու դրդապատճառը: Թվում է՝ պարտագրողն այնուամենայնիվ Տերյանն է, նա է հարկադրում իրեն վստահելով հավատալ. այդ նպատակով վկայակոչում է

[15] Նույն տեղում, էջ 196:
[16] Նույն տեղում, էջ 197:
[17] Նույն տեղում:
[18] Եժ. հ. 4, էջ 188:

պարզ ու հին շատ ճշմարտություններ՝ բոլորն էլ լիցքավորված պատմական դասերի հուշարարությամբ՝ ոչ միայն ուղղված ժամանակակիցներին, այլև սերունդներին. այդ «մտահղացումով» էլ, թերևս, իր հարցերը մնում են անպատասխան. «Մի՞թե այսպիսի ժամանակ մեր մտավորականությունն ընդունակ չպիտի լինի մոռանալու չնչին առօրյական իր կռիվներն ու շահերը...

Մի՞թե այս ճակատագրական րոպեին մենք չպիտի մոռանանք մեզ բաժանող ու ջլատող զգացումները, չպիտի միանանք բարձր ոգևորությամբ մեր սրբազան պարտականության հանդեպ:

Որքան և տարբեր լինեն մեր մտածողության եղանակները, որքան և տարբեր լինեն մեր մասնավոր ցանկությունները, մի՞թե մեզ բոլորիս ոգևորողը մեր ժողովրդի բարօրությունն ու երջանկությունը չէ...» [19]:

Եվ էլի շատ «մի՞թե»-ներ, որոնցից նամանավանդ այս մեկը սարսռազդու է. «Եվ մի՞թե մենք հայ մտավորականներս անարժան կերպով մեր անձնական ու կուսակցական հաշիվների համար պիտի զոհաբերենք մեր ժողովրդի պատիվը, կյանքը, ամբողջ ապագան»[20]:

Ավա՜ղ, բյուր ավա՜ղ, Տերյանի կասկածներն ավելի քան հիմնավոր էին ու անփարատ: Հոգեկան ողջակիզումի ծայրակետին անգամ շարադրված սթափ, զգաստ, հաստատուն, աներկբա գիտակցությամբ ու զգացողությամբ: Անգամ նվազագույն իսկ չափազանցում, գույների խտացում: Ճիշտ հակառակը, հստակից էլ հստակ, դժվարանում ես ասել՝ գիտակցություն, թե աստվածային ոգեղեն ներզգացողություն ու ներհայեցում... պարզապես Նաիրյան Ոգին մարգարե էր ծնել և ընտրել իր անդավաճան հավատացյալին ու կամավոր զոհին՝ կոչված անդուլ-անդադար հարատև ուժգնությամբ հնչեցնելու տագնապի զանգեր, ազգարարել-գուժելու այն, ինչ «եղեւ». «... Զէ՞ որ մենք ևս ահեղ փոթորկի առջև ենք կանգնած, չէ՞ որ մեր ամբողջ ժողովրդին անդառնալի, անսփոփելի աղետի վտանգ է սպառնում»[21]. «...Այսօրվա սխալն անուղղելի կլինի, այսօրվա մեղքը՝ մահացու»[22] (ընդգծումը՝ Մ. Ս.):

Ահարկու տագնապալի պատգամներին ուղեկցում-ձուլվում է բաղմաղողանջ աղերսանք-պազատանքը. «Զմոռանանք, որ ամենաչնչին սխալը այսպիսի մի ժամանակ կարող է անգարձ կորստյան գուռ բանալ մեր առջև, կարող է անթիվ դժբախտությունների առիթ հանդիսանալ», «Այսօրվա ամեն մի գործող պիտի ներշնչված լինի այն խոր և ծանր գիտակցությամբ, որ նա կանգնած է գալիք օրերի ահեղ դատաստանի առաջ, որ այսօրվա ամենափոքր սխալը կարող է կորստաբեր լինել մեր ժողովրդի ամբողջ ապագայի համար:

Պարզ պետք է լինի մեզ ամենքիս համար, որ այսօր մեր կյանքի ու մահու խնդիրն է դրված հրապարակի վրա», «...Ելնենք այս սլատմական րոպեին, կազմակերպված ուժերով կանգնենք որպես մի մարդ, մի կամք, մի հոգի:

---

[19] Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 197.
[20] Նույն տեղում, էջ 200.
[21] Նույն տեղում, էջ198:
[22] Նույն տեղում, էջ 200:

Զմոռանանք, որ ճակատագրական է բոպեն, որ մեր գործը սուրբ է»[23]:

Հայոց մտավորականության պարտք-պարտականությունը առնվազն հայ ժողովրդի ֆիզիկական փրկությունն է: Այո՛, առնվազն: «Բոպեի ճակատագրականությունն»-ը երկիմաստ-երկսայր է. մի կողմից՝ անդարձ կորստյան սպառնալիք, մյուս կողմից՝ ազգի կարևորագույն հարցերը լուծելու, ի վերջո պետություն-պետականություն վերստեղծելու իրական հնարավորություններ: Արդյո՞ք հատկապես երկրորդը չի ակնարկում Տերյանը՝ շեշտելով՝ «Անդառնալի են այսպիսի մոմենտները, և դարերն են միայն ծնում իրերի այսպիսի դասավորություն»[24]:

Հայանի բան է՝ միևնույն հնարավորություններն օգտագործելով՝ կարելի է ծայրահեղ տարբեր արդյունքներ ստանալ. նույն ծաղկից մեղուն մեղր է սանում, օձը՝ թույն: Ժողովրդի բոլոր ուժերի՝ ֆիզիկական, նյութական, հոգևոր և մտավոր, բացարձակ կենտրոնացում-համագումարումով կարելի է առավելագույն բարիք քաղել այդ ո՛չ մտացածին, ո՛չ հնարված, այլ հաշվարկված, ուսումնասիրված շատ իրական հնարավորություններից: Կտրելիությունը հաստատ իրողություն դարձնելու մեն-միակ երաշխիք-գրավական կա. նպատակի և դրան հասնելու միջոցների նույնականություն-ընդհանրականություն առաջնորդող, ղեկավարող անխարիր բոլոր անհատների ու կազմակերպությունների համար: Ժամանակի հայոց մամուլի առաջադրած «համերաշխ գործունեության», «ազգային կազմակերպության» խնդիրը Տերյանի գերագույն մտահոգությունն է: «Հարկավոր է, այո՛, ազգովին ասպարեզ դալ, հարկավոր է ստեղծել մի հեղինակավոր մարմին, որպեսզի մեր ժողովրդի ճակատագիրը հանձնված չլինի պատահական ուժերի ղեկավարության:

Հարկավոր է բոլոր տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին տեղ տալ այդ մարմնում, որպեսզի նա կարողանա միացնել իր շուրջը բոլորին, որպեսզի հայ ժողովրդի կոչը լինի նա, հայ ժողովրդի մտքի, զգացմունքների և խղճի արտահայտիչը լինի»[25]: Հարկավորը հարկավոր է, բայց... «ինչպե՞ս»-ն է պատասխան հայցում, և Տերյանի պատասխանը սա է. «Այսօր մենք պետք է մտածենք ո՛չ թե մեզ անջատող, մեզ իրարից տարբերող ու բաժանող փաստերի մասին, այլ միայն միայնուլ, ձուլող, գումարող...»[26] (ընդգծումը՝ Մ. Ս.):

Հենց այդ նույն տարիների և՛ նամակները, և՛ հոդվածները վկայում են այդ միացնող-ձուլող-գումարող կապերի խզված-անկայուն-թույլ լինելը, ինչպես և դրա հետևանքները զգալ-գիտակցելուց սերած իր անփարատ տագնապներն ու անհուն ողբերգությունը:

Հետևանքներն անակնկալ չէին, և՛ սակայն դրանից վիճակը չէր թեթևանում: 1915 թ. «Մշակի» N 227-ի «Ինքնակոչ փրկիչներ» հոդվածում[27], արդեն ճաշակած պառակտվածության ու անմիաբանության անչափելի չափեր, անդառնալի անհամար կորուստներ, Տերյանը սրբալղծություն է համարում «մտավորական փրկիչների» անհեռատես-անսրտացավ

[23] Նույն տեղում, էջ 199-201:
[24] Նույն տեղում, էջ 199.
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում:
[27] Այս հոդվածը ևս երկերի առաջին ժողովածուից հետո երբևէ չի տպագրվել:

գործունեությունը. հակառակ դեպքում կարելի, հնարավոր կլիներ խուսափել այդչափ կորուստներից, ուրեմն և դատապարտում է «ազգի փրկիչների» կեցվածքը՝ անհեթեթությամբ, անտրամաբանությամբ, պարզապես խելագարության հասցնող անհասկանալի գործելակերպով. «Ամենքն զգում էին, որ գումարված ուժերով և կուռ կազմակերպությամբ միայն կարելի կլինի որևէ ներգործական դեր կատարել այս ահեղ ժամանակներում»[28]:

Զգում էին, ընդունում պատերազմի սկզբից մամուլում հնչած համերաշխության ու միության կոչերը, և դարձյալ գործում անջատ-անջատ, նույնիսկ՝ մեծապես իրար դեմ: Ինչպե՞ս լուծել այս պարադոքս-հանելուկաուեղծվածը: Պարզվում է՝ ոչ մի պարադոքս էլ չկա: Եղածը կեղծիքն է: Մարդուն հատկապես գործով ճանաչել-գնահատելու սկզբունք ունեցող Տերյանի նախնական կասկածները վերաճում են հաստատ համոզմունքի: Այդ մարդկանց գործերը վկայում են ավելին՝ նրանք պարզապես չեն կամենում ո՛չ գիտակցել և ո՛չ էլ առավել ևս՝ գործունեություն հիմնել ազգային միասնության խարիսխով:

Հայության այդ տարիների անլուր կորուստները, դրանց պատճառների քննությունը Տերյանին հանգեցնում են սրտակեղեք մտահանգման. հայ ժողովուրդը ձեռքից բաց թողեց, չօգտագործեց «հնարավորությունները»: Եվ ինչպե՞ս բաց չթողներ, եթե իրենց ազգի փրկիչներ էին հայտարարել ժողովրդի միջավայրում համբավ ու հեղինակություն ունեցող այսպիսիք. «...Գերադասեցին գնալ հին, ծեծված, անօգուտ ուղիներով ողորմություն խնդրելու, պետական բարձրաստիճան աղվեսների չեմքերը մաչելու, նրանց թակարդ-սալոններում ճեմելու ճանապարհը»[29]:

Սեփական ունեցվածքը թողած՝ մուրա՞լ, մերժելով իրականը, գոյություն ունեցողը՝ հավատալ անգոյի՞ն՝ հայրենիքի ու հայրենակիցների մի մասի կորուստ-կործանումով, մյուս մասի հուսալքում-թևաթափումով բազմիցս ժխտված-մերժված-բացառված ճանապարհի՞ն: Իսկ ունեին պատրաստակամ ու նվիրյալ ժողովուրդ, նրա գլուխն անցնելու, իբրև գլուխ ծառայելու, անհապաղ և անհրաժեշտորեն «համազգային ընդհանուր ընտրած մարմին» ստեղծելու հոգս-պարտք, որն իրենցը չդարձավ, որովհետև չկամեցան վարագուրել ցանկանալով «այդպիսի համազգային հիմնարկություն ստեղծելու անհնարինությամբ». և քաղաքական պայմաններն ակնարկելով: «Եվ դա անում և ասում էին նրանք, որ սովորաբար իրենց արմատական են հորջորջում»: Այնինչ առաջին հերթին իրենք պիտի սկզբունք ունենային հետևյալը. «Երբ մի ամբողջ ազգ վտանգի է ենթարկում անգամ իր ֆիզիկական գոյությունը, երբ մի ամբողջ ազգ վկայում է պետության (վկայում է արյունով ու տանջանքով) իր համակրությունը, այդ ազգն իրավունք ունի բացարձակորեն պահանջելու, որ թույլ տրվի իրան ազգովին կազմակերպվելու»[30]:

«Արմատականների» «անհնարինության» մտացածին լինելը Տերյանը հաստատում է մասնավորապես Մոսկվայի հայկական կոմիտեի գոյութ-

[28] Նույն տեղում, էջ 259:
[29] Նույն տեղում, էջ 261:
[30] Նույն տեղում, էջ 260:

յամբ. «Շատ վայրերում հայությունը գիտակցեց ահավոր ժամանակի պահանջը և աշխատեց կազմակերպել տեղական հայությունը:

Այսպես, օրինակ, Մոսկվայում ռուս-թուրքական պատերազմի առաջին իսկ օրերում Մոսկվայի բոլոր հայերի և հայուհիների ժողով գումարվեց, որից հետո կանոնավոր կերպով կազմակերպվեց այդ գաղութը, ընտրելով հասարակության բոլոր խավերից միանգամայն իրավասու մի մարմին, այն Մոսկվայի Հայկական Կոմիտեն, որի բազմարդյուն, կարելի է ասել՝ փայլուն գործունեությունը բոլորիս տչքի առջևն է և որի բարոյական հեղինակությունն անհերքելի է և բարձր»[31]: Այս ամենն իրար գումարված ամենաանչան իսկ կասկած չեն թողնում. Տերյանն արդեն «Հոգևոր Հայաստան»-ում հաստատ համոզված է, որ դրանք ոչ միայն ինքնակոչ, այլև կեղծ վրկիչներ են: Բոլոր ապրված տագնապ-կսկիծները, զայրույթ-ցասումները, ֆիզիկականի և հոգևորի մտահոգությունն ունեն մի դերպատճառ. «Մենք մտահոգվում ենք այդ ֆիզիկական գոյության մասին ոչ լոկ մարդասիրական զգացմունքներից դրդված, այլև որոշ ազգային տեսակետ ունենալով: Մենք չէինք կամենա, որ մեր ժողովուրդը ոտնատակ գնար այս չփոթ օրերում, որ նա զոհ լիներ սխալ գաղափարախոսության, սխալ ըմբռնված ազգային իդեալի և վերջը հուսահատության ու հիասթափության գիրկն ընկներ»[32] (ընդգծումը՝ Մ. Ս.):

Այսպիսով «Հոգևոր Հայաստան» հոդվածն էապես հայոց միջավայրում ընդունված և որոշակի դեր ստանձնած «ազգային գաղափարի» երեք տարբերակների վերլուծում-արժևորում է: Դրանցից տիրապետող ավելի ընդհանրականը՝ «բուրժուական ինտելիգենցիայի» ծրագրի տարբերակը, Տերյանը քննում է հանգամանալի մանրակրկիտ խստությամբ: Երբեմն նույնիսկ շատ կտրուկ, անողոք որակումները թելադրված են պարզագույն մի ճշմարտություն հասկանալի դարձնելու նպատակով, այն է թե՝ սխալ ճանապարհը կարող է գոյություն արժենալ: Մինչդեռ կա ընտրություն, ասել է թե՝ դեպի միմյանցից խիստ տարբեր հանգրվաններ տանող ճանապարհներ:

Ինչպես միշտ, Տերյանը ներկայացնում է դարձյալ «ապագա Հայաստան» ազգային իդեայի ու իդեալի «բուրժուական» տարբերակը՝ քննելդատելու «հետախույզի» հմտությամբ, մտածողության, հավատքի, նպատակների, ի վերջո էության ստույգ, հավաստի ցուցանիշներով: Կետ առ կետ, քայլ առ քայլ դիտարկելով այդ ինտելիգենցիայի ծրագրերի ու նպատակների հանգանակները՝ բանաստեղծը կայացնում է այս միակ տրամաբանական եզրահանգումը. թե գրանցում «ազգային կուլտուրական գունավորում», «ազգային կուլտուրական որոշ գաղափարներ, որոշ ձգտումներ», իհարկե, առկա են: Եվ սակայն, հիմքից ու էությամբ տրամաբանական այս շղթայի սխալ լինելն անվիճելի է փաստացի. «...Ամենից առաջ և վճռական կերպով փաստերը ժխտում են մի այդպիսի ազգային ոգու գոյությունը մեր բուրժուական ինտելիգենցիայի ծոցում:

---

[31] *Նույն տեղում, էջ 261:*
[32] *Եժ. հ. 3, էջ 112:*

Ընդհակառակը, որպես հայ բուրժուազիան, այնպես և նրան մշտապես հարազատ, ավելի լավ է ասել հոգեհարազատ հայազգի ինտելիգենցիան իր ամենախոշոր ու ամենադրական մասով ապազգայնացած է:

Դա անժխտելի փաստ է:

Նրա՝ այդ ինտելիգենցիայի համար բնավ գոյություն չունի հայ կուլտուրա ասածդ»[33]:

Ազգային մշակույթի գլխավոր դրածոն-բազադրիչներին՝ լեզվին, գրականությանը, արվեստին անտեղյակ լինելը ամենևին էլ արդյունք չէ «սուրբ միամտության», որ փոքրագույնն է չարյաց, և սակայն հզոր չարիք է դառնում, երբ չկա տեղյակ լինելու ցանկություն, տիրում է կամքի բացակայություն, որ կրկնապատկվում է այդ ամենի հանդեպ եղած արհամարհանքով: Տերյանի բերած մի քանի փաստարկ-ապացույցներին, ցավոք, կարող ենք հավելել թեկուզ միայն XIX դ. վերջի և XX-ի սկզբի հայոց փառահեղ մտավորականներից ամեն մեկի կյանքից մի-մի դրվագ...

Իր լեզուն, իր հայրենիքը, իր հոգևոր հայրենիքը ճանաչելու ցանկությունն իրականացնելու որևէ արգելք ու խոչընդոտի կարելիություն Տերյանը չի ընդունում: Հայ իրականության մեջ առկա իրողությունը հերքվում է այլ հպատակ կամ «վոքը» ազգերի՝ մասնավորաբար լեհերի՝ ազգային խնդիրների իրագործման հետևողականությամբ, որը խուլ է տալիս պնդելու, որ «անբարենպաստ պայմաններ» վկայակոչելը պարզապես ոչինչ չանելու, չանելն արդարացնելու պատրվակ է: Ամենաանհեթեթն ու ամենավտանգավորը սա է. հենց այն մտավորականությունը, «...որ ժխտում է մեր ժողովրդի լեզուն, որ արհամարհում է մեր գրականությունն ու մամուլը (ամենաեռանդուն կերպով ձգտելով ավելի ու ավելի ցած գցել նրանց ու փոխարինել մի այլ մամուլով, որի համար ոչ մի միջոց չէ խնայում), ... այսօր տոգորվել է մի անասելի ոգևորությամբ, մի չտեսնված ազգասիրությամբ: Նա ևս իր լոզունգը դարձրել է «Հայաստանը»:

Եվ այդ մարդիկ այսօր ամենից բարձր են ճչում Հայաստանի մասին, միևնույն ժամանակ ինքնակոչ կերպով ստանձնելով ազգի ներկայացուցչության իրավունքը:

Նրանք են, որ պիտի հայության պաշտպան կանգնեն, հայության բերանը լինեն: (Ստացվում է մի սքանչելի պատկեր. հայության բերանը հայերեն չէ խոսում, հայության շուրթերը հայերեն բառեր չեն կարող արտասանել)»[34]:

Վերացականի ոլորտում զավեշտական, իրականում ողբերգական այս իրողությունը խոստանում է բացառապես «ազգային շահեր» հասկացության իմաստափոխություն «անձնական կամ խմբակային-կուսակցական շահ»-ի: Ուրեմն և այդպիսին է հասարակական այդ հոսանքի «գաղափարական» մանրակերտը՝ պատճառահետևանքային չարալուծակ համալիրով: Չիմանալով ու չսիրելով երկիր-ժողովրդի հեռավոր ու մերձակա պատմությունը, գրականությունը, երաժշտությունը, նկարչությունը, թատրոնը՝ «այն հոգևոր երկերը, որ կենդանություն են տալիս մարմնավոր, նյութական» երկիր-Հայաստանին, հնարավոր չէ պահպանել այդ ա-

[33] Նույն տեղում, էջ 107–108:
[34] Նույն տեղում, էջ 109:

մենի կյանքը, կենդանությունը, ապահովել դիմակայելու հնարավորությունը. կամա թե ակամա հոգևորի կորստյանն ու մահացմանը նպաստելու արդյունքը անշունչ-անկենդան-անհոգի մարմին, նյութ ունենալն է: «Ես համարձակվում եմ պնդել, որ սիրով կարելի է անել ամեն ինչ և միայն նրանով կարելի է անել ամեն ինչ»[35], «...միայն սիրով կարելի է անել ամեն ինչ, առանց սիրո՝ ոչինչ»[36], սա է Տերյանի «ոսկե սրենքը»:

Բուրժուական մտավորականության գործունեությունն ու կեցվածքը տեսլացնում-ենթադրում են Հայաստան անունով անշունչ-անկենդան-անհոգի մարմին, նյութ, դի: Արժե՞ արդյոք հայոց ազնվագույն դավակների թանկ արյունով ձեռք բերել ընդամենն անկենդան դի՝ ոչնչացնելով, սեփական ձեռքով սպանելով հայոց դարավոր վսեմ ու լուսավոր երազանքը՝ ամեն դեպքում սեպված իր բազմադարյան հոգևոր հարստությանը: Ըստ այդմ վերոհիշյալ մանրակերտ - «ազգային իդեալին» Տերյանը տալիս է «Նյութական Հայաստան» անվանումը՝ պատճառաբանելով նաև բնորոշման իսկությունը, և դարձյալ տեղին փաստարկներով, ինչպես հիշարժան այս մեկը. մեր հայրենիքում շատ են հայ բուրժուազիայի առատ նվիրատվություններով կառուցված՝ շքեղ ու հոյակապ դպրոցական շենքեր (որոնց ճակատին անշուշտ ոսկետառ փորագրված է պանծալի բարերարի անունը): Շենքեր միայն... «Սակայն կգտնե՞ք արդյոք մի դպրոց,— շարունակում է նա,— որ օրինակելի լիներ, կանգնած լինի իր բարձրության վրա...»[37]: Որտեղից գտնեք, եթե ազգային բարերարների ոսկին կոչված է ապահովելու արտաքին-նյութական շքեղություն. իսկ թե ինչպիսի՞, ի՞նչ դպրոց է լինելու այդ շենքում, թե վերջապես դպրո՞ց է լինելու, ծառայելու՞ է արդյոք կրթելու սերունդներ, նման հարցեր նրանց համար չեն եղել և չկան: Եվ Տերյանի՝ «Ով լոկ շենքերի մասին է մտածում, նա «չգիտե ինչ է անում»[38] գավածին կոչին գալիս է արձագանքելու այս մեկը. «Երբ հասավ Գագաթ կոչված տեղը, այնտեղ նրան խաչը հանեցին. և չարագործներին էլ՝ մեկին աջ կողմը, մյուսին ձախ կողմը՝ խաչեցին: Եվ Հիսուս ասաց. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ավետ. Ղուկասի 23. 33-34)[39] ավելորդ դարձնելով որևէ բացատրություն:

Հայաստանը ճանաչել միայն որպես նյութական Հայաստան հասկացությունը Տերյանը մերժելով-մերժում է. միայն «շենքեր» կառուցելով ավարտված համարել հայրենաշինությունը՝ նշանակում է կուրորեն ընթանալ ինքնաոչնչացման. «Ջկամենանք շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը, հոդու և մտքի հալարտությամբ ճոխացնենք նրան:

«Շենքերի հայրենասիրություն» — դա է ահա մեր լիբերալ-ազգասեր-բուրժուա-ինտելիգենցիայի հայրենասիրությունը:

Ահա այդ արտաքին սահմաններով առանձնացած խավարի մեջ դեգերող, բայց օտարների աչքին թոզ փչելու համար պատեհ դեպքերի համար

---

[35] Նույն տեղում, էջ 199:
[36] Նույն տեղում, էջ 233:
[37] Նույն տեղում, էջ 115:
[38] Նույն տեղում, էջ 114:
[39] Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների. Ս. Էջմիածին, 1994. Նոր Կտակարան, էջ 116:

արտաքին չքեղ ու հոյակապ շենքերով ճոխ Հայաստանն է նրանց բաղձանքի առարկան:

Զկամենանք այդպիսի մի հայրենիք»[40]:

Շենքերի հայրենասիրություն, «զոոլոգիական» (կենսաբանական) ազգասիրություն հասկացությունները հոգեկան վսեմի ստորին բնազդների ոլորտից են, մինչդեռ հայրենասիրություն, ազգասիրություն հասկացությունները պատկանում են գիտակցություն, ինքնագիտակցություն բարձրագույն ոլորտին: «Ահա այնպես, ինչպես դուք էիք սիրում ձեր հորը, բայց այստեղ ոչ միայն բնազդ է, ինչպես առաջին (ձեր) դեպքում, այլ նաև գիտակցություն»[41]:

Առաջինով կա միայն նյութական Հայաստան կառուցելու կարելիություն՝ ոչ ավելին. իսկ հոգևոր ոլորտի տիրակալը դատարկությունն է: Եվ մարդկային այդ որակը՝ առանց պատասխանատվության զգացումի, առանց խղճի խայթի, սրտի ցավի՝ լոկ սեփական շահի համար ընդունակ է զոհելու թե՛ ազգ, թե՛ հայրենիք: Այս եզրակացությունից հետևող Տերյանի վերաբերմունքն արդեն անթաքույց արհամարհանքն ու նողկանքն է. «Եվ եթե այսօր մեկը ոչնչի տեղ է դնում նրանց՝ այդ հոգու ասպետներին ու միևնույն ժամանակ ծունր է չոքում այսօրվա արյունոտ կռվի հերոսների առջև, ես չեմ հավատում նրան, ես զզվում եմ նրա հրաբորբոք հայրենասիրությունից»[42]: Ահա հենց այդպիսիներին էլ հասցեագրված են բանաստեղծի ցավածին – գառնաղի այս տողերը.

Չեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին
Եվ խանդավառ աղմուկներին այդ չփոթ.
Գաղտնի մի թույն կեղեքում է իմ հոգին
Եվ ձեր խինդը սարսեցնում է, որպես բոթ:

Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր,
Ո՞վ է թարգման մեր դարավոր տանջանքին...[43]

Տերյանի քննականորեն իմաստավորած հարցերի հարցը, ըստ էության, ազգային գաղափարախոսության- ազգային իդեալի հարցն է. ո՛չ այդ պահի, այդօրվա, ժամանակի որոշակի այդ հատվածի. այն վերաբերում է ազգային գոյության «ինչպե՞ս»-ին և «ի՞նչ»-ին՝ մշտահոլով լինելիության իդեալին: Արարչությունը մարդկային կյանքի բարձրագույն կերպ ճանաչող Տերյանը նույն արարումը պիտի որ համարեր նաև ազգային գոյության նպատակ, ուստի միակողմանի չլինելու թելադրանքով շարունակում է պարզաբանել. «Ընթերցողը կարող է, սակայն, ենթադրել, որ իմ բաղձանքը լոկ խաղաղ կուլտուրական աշխատանքն է, որով առաջարկում եմ զբաղվել: Այո, եթե կուզեք, այդպես, միայն եթե այդ խաղաղ կուլտուրայի առաջընթացը խանգարող հանգամանքներ չլինեն:

[40] Եր. հ. 3, էջ 115:
[41] Նույն տեղում, հ.4, էջ 122:
[42] Նույն տեղում, հ.3, էջ 116:
[43] Նույն տեղում, հ. 2, Երևան, 1973, էջ 73:

Քանի որ կան այդ արտաքին արգելքները, բնականաբար մեր ուշքը միշտ պիտի դարձած լինի նրանց վրա»[14]:

Այսինքն արտաքին արգելքներ վերացնելը պետք է լինի հանուն և ի նպաստ «խաղաղ կուլտուրական առաջընթացի»: Զպիտի կարծել, սակայն, որ դա է միայն նրա մտահոգությունը, և հետամուտ է բացառապես այդ խնդրի լուծմանը: Պարզապես, Տերյանին վախեցնում էր «Նյութական Հայաստանը» ազգային միանձնյա իդեալ հռչակելը, որ նշանակում էր ազգի բոլոր ուժերը նվիրաբերել-զոհաբերել կարգախոս ընտրած լոկ այդ նպատակին:

«Հոգևոր Հայաստանը» իբրև ազգային իդեալ հռչակելը երբեք նյութական Հայաստանի անհրաժեշտության ժխտում, թերարժեքավորում չէր. Տերյանը ո՛չ այնքան պարզամիտ էր, ո՛չ էլ այնքան անտեղյակ նման մտածումների համար: 1916 թ. «Армянский Вестник»-ի 42, 43 համարներում տպագրված «Ռուսահայերի հասարակական զարգացումը» (Դ. Անանունի դրքի առիթով)» գրախոսականում Տերյանը գրում է. «Մեծագույն դժբախտություն հանդիսացավ այն, որ հայ ժողովուրդը կորցրեց իր քաղաքական անկախությունը և դրա հետ միասին ինքնուրույն կուլտուրական զարգացման հնարավորությունը»[15]:

Կասկած չի կարող լինել, որ Հայաստան հայրենիքի քաղաքական անկախությունը իր վերին բաղձանքն ու ազգային իդեալն էր՝ առանց որևէ վերապահության : Ըստ այդմ պետք է ընդունենք, որ «նյութական» և «հոգևոր» տարորոշումը՝ Տերյանի համար պատմահայեցողություն չէր, այլ քննական բնույթով իսկ իրականության զգաստ վերլուծություն: Էապես իր կարծիքն այն է, որ նյութականը՝ պետության իմաստով, Հայաստան ստեղծելու անհրաժեշտ, բայց ոչ երբեք բավարար պայման է: Բացի Հայաստան ստեղծելու խնդրից, կա ոչ պակաս, գուցե և ավելի կարևորը՝ ձեռք բերածը պահելը, կենդանությունն ապահովելը: «Նյութականը» չի կարող Հայաստան դառնալ առանց կայացած կամ գոնե այդ ձգտումը դավանող ազգի: Միայն նյութականի ճիգ ու ջանքերով հազիվ թե իրականացվի ազգի կայանալը: Դրանք կարող են արագացնել, դյուրացնել գործընթացը, նպաստավոր պայմաններ ստեղծել, բայց. «Կա և ներքին կամքի խնդիր: Այդը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավորհոգեկան կապով: Պեաք է, բացի արտաքին հնարավորությունից, լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում»[16] (ընդգծումը՝ Մ. Ս.): Որևէ հակադրություն արտաքին ու ներքին ուժերի, նյութականի և հոգևորի՝ այստեղ և առհասարակ օտար ու անհարիր է Տերյանի աշխարհընկալմանը: Ամեն պարագայում խոսքը վերաբերում է դրանք համադրելու կենսական անհրաժեշտությանը: Վերոնշյալ համադրության անհրաժեշտությունը չգիտակցելը կամ գիտակցել չկամենալը հաստատապես կարող է «երաշխավորել» միայն մի բան՝ ունեցվածքի անօգուտ-աննպատակ վատնում, բազում կյանքերի անիմաստ

[14] Նույն տեղում, հ. 3, էջ 113:
[15] Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 378.
[16] Եժ. հ. 3, էջ 113:

զոհաբերություն և, ի վերջո, թե՛ նյութական, թե՛ հոգևոր Հայաստանի կործանում՝ դանդաղընթաց, անցավ, աննկատ, բայց՝ անդառնալի: Արդ, երբեմն վճռորոշվում է մտավորականության՝ իբրև առաջնորդի՝ ազգի միավորների համահավաքման-գումարման ներքին մղումը, ներքին կամքը և տևական ու ծանր աշխատության գնով ազդ դառնալու, լինելու «արտոնություն»-իրավունքը վաստակելու առաջնայնություն-կարևորությունը հիմնարար սկզբունքներ գիտակցելը: Ըստ Տերյանի՝ արտաքին սահմանները, քաղաքական ազատություն-անկախությունը, ասել է՝ պետությունը (նյութական Հայաստանը) իմաստ ունի միայն ու միայն այն դեպքում, երբ առկա է ազգի ինքնությունը՝ այն ամենի հանրագումարը, ինչ հոգևոր ինքնությամբ օժտված ազգ կոչվող միավորին տարբերում է մարդկություն ամբողջի մեջ. «Ես ոչ մի արժեք չեմ տալիս այն ազգության, որ արտաքին սահմաններով է պահպանում իր ինքնությունը, և, որ գլխավորն է, մի ինքնություն, որ կարիք էլ չկա պահպանելու»[47]: Ասել է թե՝ ազատ ու անկախ պետության սահմանների անձեռնմխելիությունը չի կարող լինել ինքնության պահպանման երաշխիք, ինչպես մարդու մարմնի առողջ և պաշտպանված լինելը բնավ էլ նրա հոգու կենսունակության առհավատչյան չէ: Ամենևին էլ բացառված չէ, ճիշտ հակառակը՝ մեծ է ամուրանխախտ արտաքին սահմանների ներսում ազգային ինքնության կորստյան հավանականությունը, եթե բացակայում է այդ ինքնությունը գիտակցող, այն կրող հավաքականության մասը, բազկացուցիչը լինելու գիտակցությամբ զոդված մարդկանց համախմբված միասնությունը: «Ահա թե ինչու՝ ես կարծում եմ,– շարունակում է հիմնավորել բանաստեղծը,– որ բացի արտաքին արգելքները հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծե այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյաներն են»[48]: Ազգային հոգևոր արժեքների աննահանջ, անդադար արարում-բազմապատկումն է դեմքը, տեսակը, ասել է՝ ինքնությունը պահպանելու միակ երաշխիքը և ամենաղորեղ գրավականը քաղաքական թե՛ մեծ, թե՛ փոքր կշիռ ունեցող, ապահով թե անապահով, ազատ թե անազատ, կուլտուրապես կազմակերպված, ասել է՝ իբրև ազգ կայացած կամ տակավին չկայացած, բայց գրան ձգտող բոլոր ազգերի համար: «Ֆրանսիացոց նման կուլտուրապես կազմակերպված ու զորեղ և քաղաքականապես ապահով մի ժողովուրդ ամեն կերպ աշխատում է պահպանել իր ինքնության գլխավոր նշանը – իր լեզուն, և դրա համար ամենուրեք հիմնում է այն ալիանսները, որ մեր Թիֆլիսում էլ կա: Մինչդեռ մենք մի Մոսկվայում, ուր բազմահազար ու հարուստ գաղութ ունենք, չունենք գեթ մի փոքրիկ ընկերություն, մի հիմնարկություն, որի նպատակը լիներ հայոց լեզվի պահպանումն ու տարածումը ոչ թե ստարների, այլ մերայինների՝ հայերի մեջ»[49]: Առերևույթ՝ աննշան, փոքր գործ, ըստ էության՝ հայապահպանման վճռորոշ, հզոր միջոց և հայահավաքման զորեղ խթան ու նախադրյալ: Իբրև ազգահավաքի, ազգակայացումի առաջին քայլեր Տերյանը պարտադիր է համարում մտու-

[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում, էջ 114:
[49] Նույն տեղում:

վորականության գոնե առանձին խմբերի համահավաք կազմակերպումը, ուժերի գումարումը նամանավանդ այն արվեստագետ մտավորականների, որոնք արդեն ոչ միայն զգում, այլև գիտակցում են իրենց ինքնությունը՝ իրենց հայ լինելը. «Մինչև այժմ մենք չունենք ոչ մի հիմնարկություն կամ ընկերություն, որ նպատակ ունենար, օրինակ՝ հայ նկարչությունը խրախուսելու, հավաքելու ի մի հայ նկարիչներին, որոնք այժմ արդեն ոչ միայն բնազդով, այլև գիտակցությամբ հայ են իրենց արվեստի մեջ (օրինակ՝ Սարյան, Սուրենյանց և այլն)»[50]:

Նույնաբնույթ մտահոգությունների հաճախադեպ ներկայությունը մյուս հոդվածներում, նաև նամակներում, վկայում են Տերյանի հայեցակետից այդպիսի ընկերությունների կարևորությունը: Քանզի երկրի, ազգի գլխին կախված արտաքին արհավիրքի պահին հայրենիքը կյանքով-արյունով փրկելու հերոսականության և հանապազօրյա ուրեմն և հանդարտ-տևական աշխատանքի առօրյա հերոսականության համաժամանակյա համադրումով միայն կստեղծվի «էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին»: Մինչդեռ իր դիտարկմամբ մարդկանց մեծամասնության աչքում և համար որևէ գործի կարևորությունը ուղիղ համեմատական է մեծ և կարևոր դառնալու իրենց տալիք հնարավորությանը. «Մենք չենք ուզում կյանքի աշխատավորի ուրախությունը: Մեզ ճնշում է մրջնաջան, բայց հաստատ աշխատանքը, մենք արծվի թռիչք ենք ուզում, մենք ուզում ենք «հերոսներ» լինել,– գրում է մի նամակում:– Եթե կուզեք, այդ ցանկությունների մեջ քաղքենիական էգոիզմի մեծ չափ կա... «Ես ուզում եմ անպայման մեծ լինել և գործը սիրում եմ լոկ նրա համար, որ դա ինձ մեծ լինելու հնարավորություն կտա»,– այդպես են դատում, կամ պետք է որ դատեն վերոհիշյալ մարդկանցից նրանք, որոնք գոնե անկեղծ են իրենք իրենց հետ»[51]:

Ով ով, բայց «ազգի մտավորական» կոչման հավակնորդն անհնար է, որ փոքրամասնությունը չլինի: Ճշմարիտ մտավորականի նպատակը սեփական անձը չէ, այլ հավերժի՝ իր երկրային կյանքի ժամանակահատվածում իրենով ծայր չառած և իրենով չավարտվող գործի սեփական բաժինն ըստ ամենայնի արժանավայել կատարելու գիտակցությունն ու առաքելությունն է: Այս պարագայում պարզապես անհեթեթ է մեծ ու փոքր գործ տարբերակումը: Տերյանին անհանգստացնողը նաև ազգի դեկը ձեռքն առած մտավորականության, ասել է՝ վերոհիշյալ մեծամասնությանը բնորոշ վարքն ու գործելակերպն է. «փոքր» գործերով նրանք չեն զբաղեցնում իրենց՝ կամ անկարևոր, կամ անիրագործելի համարելով դրանք: Ինքը փոքրամասնությունից էր: Չէր ընդունում ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ «կամ»-ը. «Ահա այդ առօրյա կուլտուրական աշխատանքի առջև ներկա պայմաններում էլ չկան արգելքներ, արտաքին խոչընդոտներ, մինչդեռ դրանք գերապուն կարևորություն են ներկայացնում ազգային ապագան կառուցանելու տեսակետից:

Ցավոք է ծույլերի հոգեբանությամբ հույսներս դնենք լոկ արտաքին հրաշքների վրա. չպետք է մեզ կերակրենք այն հավատով, որ մի արտա-

[50] Նույն տեղում:
[51] Նույն տեղում, էջ 287:

քին փոփոխություն, մի դյուրթական ձեռք մեզ ազգ կգարձնե: Չպետք է կամենանք մեր հույսը և ապագան «նյութական Հայաստան» գաղափարի վրա հիմնել, այլ պիտի տենչանք ու աշխատենք «հոգևոր Հայաստանի» համար»[52] (ընդգծումը՝ Մ. Ս.): Նամակներից մեկում էլ ավելացնում է. «Մերոնք աչքերը տնկել են Տաճկահայաստանի վրա, թող աղատվի մեր երկիրը – ո՞վ չի ուզում այդ, բայց մի՞թե իրավ երբ այդ լինի, հայը պիտի Թումանյանին ավելի գնահատե, քան Մանթաշովին և պիտի իրա համար ավելի մեծ պատիվ համարե առաջինի բարեկամությունը, քան վերջինինը: Երանի հավատացելոց: Ես այն կարծիքին եմ, որ մենք չափից դուրս մեծ նշանակություն ենք տալիս արտաքին ուժերին, նյութական հանգամանքներին և կարծում ենք, որ երբ մեր այսօրվա ինտելիգենտը մինիստր դառնա – նա կսկսի հասկանալ այն, ինչ չի հասկանում, երբ վարժապետ է, առևտրական, «ատվակատ», «բժիշկ», «հասարակական գործիչ», պրոֆեսոր և այլն»[53]: Տերյանը ո՛չ այստեղ, ո՛չ առհասարակ չի նսեմացնում կամ, ըստ որոշ կարծիքների, չի ժխտում նյութական Հայաստանի՝ իբրև իրողության անհրաժեշտությունը: Խոսքը չի վերաբերում նյութական Հայաստանի անհրաժեշտ-ոչ անհրաժեշտ, էական կամ անէական լինելուն: Խնդիրը վերաբերում է ազգի լինելիության, գոյատևման նպատակին, որ ազգային բոլոր գործողությունների անբեկանելի անկյունաքարն է: «Նյութական» և «հոգևոր» հասկացությունները ղուգահեռված են «մարմին» և «հոգի» աստվածաբանական հիմքին: Զտարյուն քրիստոնյա Տերյանը գոյության նպատակ պիտի որ ճանաչեր հոգու կատարելության ձգտումը՝ ստեղծագործ կատարելության միջոցով («Կյանք նշանակում է ստեղծագործություն – ուր չկա ստեղծագործություն, չկա և կյանք»[54])՝ երբևէ ակնարկ իսկ չանելով, դեթ չնչին հիմք չտալով անգամ ենթադրելու, թե հնարավոր է համարում երկրային կյանքում հոգու՝ մարմնից անկախ գոյությունը:

Խնդրո առարկան ձգտումի, ապագայի նշանակետն է: Կրկնենք, որ հոգու գոյությունը ենթադրում, ավելի ճիշտ հավաստում է մարմնինը. առանց երկրորդի առաջինը չկա և չի կարող լինել գոնե այս կյանքում, և տվյալ պարադայում գործ ունենք բացառապես երկրային իրողություններ-ի հետ: Արդ, շարունակելով ղուգահեռը՝ պիտի ընդունենք, որ «Հոգևոր Հայաստանը», բազմիցս «Հայաստանի հոգի»-ին համարժեքվելով, ոչ միայն չի ժխտում «նյութական Հայաստան»-մարմնի անհրաժեշտությունը, այլ ինքնին, ինքնըստինքյան հաստատում է հասկանալի, անվիճելի հոգի-մարմին անտրոհելի ամբողջությունը: Տերյանի մտատանջության սլաաճառը հնարավոր տարբերակներից վատթարագույնն է՝ մարմին առանց հոգու: Չէ՞ որ մարմնի գոյությունը հոգեղենի պարտադիր պայման չէ. դիակն էլ է մարմին: Բուրժուական մտավորականության Հայաստանը Տերյանին պատկերանում է ճիշտ իբրև անկենդան մարմին՝ անշունչ-անհոգի: Որքանով ժողովրդի բոլոր ջանքերը, ուժերը, ըստ նրա, պիտի ուղղվեն մարմնի փրկությանը, նյութական Հայաստան ստեղծելուն: Նման գաղափարն ունենալով որպես ազգի գոյության նպատակ-իդեալ՝ նյութական

[52] Նույն տեղում, էջ 114:
[53] Նույն տեղում, հ. 4, էջ195:
[54] Նույն տեղում, հ. 3, էջ 77:

Հայաստանի ստեղծումով էլ պետք է իրականացած համարվի ազգային նպատակը, լուծված «ազգային» բոլոր հարցերը: Ստացվում է՝ քաղաքական անկախություն, անձեռնմխելի սահմաններ, կայուն պետականություն ունեցող որոշ ժողովուրդներ ապրում են աննպատա՞կ, թե՞ ազգային իդեալ-նպատակը փոփոխական կատեգորիա է: Տերյանը դեմ է դրան, չի ընդունում այդպիսի արհեստական և շատ վտանգավոր երկատում:

Ի վերջո, «Նյութական Հայաստան», «Հոգևոր Հայաստան» հայեցակարգերի խարիսխը, էությունն աշխարհաճանաչումի, աշխարհաքննումի հավերժական-մշտնջենական «Գոյը նյութն է, թե՞ հոգին, մատերիա՞ն է, թե՞ իդեան» հարցն է՝ հեղինակներից ամեն մեկի միանշանակ պատասխանով: Տերյանը տարակույս չունի, որ «Նյութական Հայաստանը» չգիտակցված մահ է՝ անարյուն, անցավ, առերևույթ քիչ նկատելի, դանդաղ, բայց վերջնական մահացում՝ ձուլում: Ուրեմն և եզրակացությունները, ասել է՝ «Հոգևոր Հայաստան» հայեցակարգի գրույթներն այսպիսիք են.

– Հայաստանը կա, գոյություն ունի, կենդանի է, եթե կա հայոց ազգը՝ անտրոհելի ամբողջություն-միասնականությամբ, ինքնագիտակից-ինքնաճանաչ:

– Ազգի գոյության կարևորագույն առհավատչյան ոգի-հոգու կենսունակ, կենդանի լինելն է:

– Ազգի հոգին է նրա մշակույթը՝ լեզուն, արվեստը, գիտությունը:

– Մշակույթի կենդանությունը ցանկացած ժամանակաշրջանում հենց այդ ժամանակի համաշխարհային չափանիշներին համապատասխանելն է:

– Մշակույթը չի ստեղծվում օդի մեջ: Աստիճանական է մշակույթի զարգացումը: Աստիճանների համաչափությունը հաստատուն-հանգիստ առաջընթացի նախապայման է:

– Մշակույթի զարգացման աստիճանները այդ մշակույթը կրող ժողովրդի տարբեր սերունդներին իրար կապող-միացնողներն են:

– Աստիճաններից ցանկացած մեկի չլինելը, խախուտ լինելը կնշանակի մշակույթի զարգացման, կենդանության կորուստ:

– Քանի որ մշակույթը կապում-միացնում է ազգի տարբեր սերունդներին, նշտնակում է ազգը սոսկ ներկա սերունդը չէ:

– Ուրեմն ազգային իդեալ-նպատակը այդօրվա սերնդի իդեալ-նպատակը չէ, այլ ալգի բոլոր սերունդների, թեպետ ամեն սերունդ ունենում է իր առանձնակի խնդիրները, տվյալ ժամանակի կարևորագույն հարցը կամ հարցերը:

– Այսինքն՝ ազգային իդեալը դեպի անսահմանություն, հավերժություն ձգվող սանդուղքն է, անընդհատ-շարունակական ընթացք:

– Որևէ սերունդ չի կարող կառուցել սանդուղքը՝ իրականացնել ազգային իդեալը. ամեն սերունդ սանդուղքի ի՛ր աստիճանն է կառուցում:

– Մշակույթի զարգացման, ազգային հոգու ճշմարիտ ինքնադրսևորման, ազգային դեմքի-ինքնության անաղարտ լինելու կարևորագույն նախապայմանը ազատությունն է: Այս դեպքում հավասարարժեք են արտաքին ու ներքին ազատությունը:

– Ազգային ինքնություն, ազգային արժանապատվություն ունեցող ազգը չի կարող չգիտակցել սեփական տարածքի օրինական ժառանգ լինելը. հետևաբար՝ այդ տարածքի վրա իր քաղաքական անկախությունը, տերն ու տնօրենը լինելը վավերացնող պետականության գոյության անհրաժեշտությունը:

– Պետությունը ազգային ինքնության պահպանման (պահպանում այս դեպքում նշանակում է շարունակական զարգացման ապահովում) լավագույն նախագծյալ-երաշխիք է:

– Պատմական հայրենիքի տարածքի վրա ստեղծված պետության պայմաններում ազգային մշակույթի զարգացումը երանելի, կատարյալ, իդեալական տարբերակ է:

– Ցանկացած պետության՝ թե՛ հզոր, թե՛ ակար, արտաքին սահմանները մշտապես ենթակա են փոփոխության, այսինքն՝ նյութական կորուստներ են ունենում բոլորը՝ ժամանակ առ ժամանակ:

– Եվ «պատմություն» խաղից գուրս են մնում, կործանվում են այն ազգերը, որոնց նյութական կորուստները հուսահատության, հիասթափության են վերածում՝ հոգեպես ընկճելով ի չիք դարձնում նաև հոգևոր հարստությունը, այսինքն ընդմիշտ, առհավետ ոչնչացնում նյութական կորուստները հետ բերելու հնարավորությունը:

– Նյութական որևէ կորուստ չի կարող ցավ չպատճառել տիրոջը: Եթե նյութականը անիրոջ կյանքի գոյության միակ իմաստ-նպատակն է, ոչ թե միջոց իր նպատակները լավագույնս իրականացնելու համար, ապա նյութականի կորստով կանհետանա կյանքը: Մինչդեռ հոգևորը նպատակ ունեցողը կխոցվի նյութական կորուստներից, բայց կենդանի, կանգուն կմնա՝ չհաշտվելով նյութական կորստի հետ և գիտակցելով դրա վերադարձման անհրաժեշտությունը՝ կաչխատի սեփական կորուստները վերադարձնել՝ շարունակելով մնալ «խաղասեղանի» շուրջը:

– Նյութական կորուստը վերականգնելը կարող է վեր լինել մի սերնդի ուժերից, գուցե այն պահանջի ավելի մեծ ժամանակամիջոց. մի քանի սերնդի կյանք: Եվ եթե սերունդներից մեկն իր գոյության նպատակը համարի և բոլոր ուժերը այդ կորստի վերականգնմանը ուղղի՝ չկառուցելով սանդուղքի ի՛ր աստիճանը, վերագտած նյութականի հետ կհայանվի անդունդում՝ կորցնելով ինքնությունը. նրա դեմքը կձուլվի դեմք ու ինքնություն ունեցող որևէ այլ ազգի:

– Անգամ եթե բացառենք նյութական կորուստները, աներեր, հաստատ համարենք նյութականը՝ պետությունը, դարձյալ ազգի գոյությունը բացարձակ երաշխավորված համարել չենք կարող: Մահացում, ազգի դեմքի, ինքնության, տեսակի ոչնչացում-կորուստ հնարավոր է նաև այդ պայմանով:

– Ուրեմն առանց մշակույթի զարգացման, առանց իրեն վիճակված աստիճանի կառուցման՝ նյութական ցանկացած խնդրի լուծում դատապարտված է ձախողման, անիմաստ, ապարդյուն վատնումի:

– Հնարավորությունների ու բարենպաստ պայմանների լիառատ առկայությամբ, առավել ևս դրանց նվազագույն չափի գոյության դեպքում

մշակութային աստիճանի ստեղծումը հնարավոր է միայն և միայն ստեղծողների առ հարազատ ժողովուրդ-մշակույթ սիրո առկայությամբ:

– Ճանաչել և սիրել ժողովրդին՝ կնշանակի ճանաչել և սիրել նրա մշակույթը:

– Ժողովրդին ծառայելու, ժողովուրդ ներկայացնելու և առավել ևս առաջնորդելու համար անհրաժեշտ է սիրել և ճանաչել նրան: Սիրել, սակայն ոչ հիվանդագին սիրով, այլ առողջ զգայմունք+բանականություն: Ժողովրդին ճիշտ ուղի ցույց տալու այլ տարբերակ չկա:

– Հիվանդագին սերը ենթադրում է սևեռում սիրո օբյեկտի վրա և նրան շրջապատող իրականության նկատմամբ մշուշոտ-աղավաղված, ոչ հստակ հայացք: Այնինչ շրջապատող իրականությունը բազում թելերով կապված է այդ օբյեկտին, և վերջինիս դոյությունը պայմանավորված է դրանց միջև դոյություն ունեցող փոխհարաբերություններով:

– Հայաստան-հայությունն այս երկրագնդի վրա է: Այս ամբողջի մի մասն է, ասել է՝ այս գնդի վրա տեղի ունեցող որևէ կարևոր իրադարձություն անդրադառնում է նաև նրա վրա: Արդ՝ անհրաժեշտ է ժամանակին հասկանալ նաև շուրջը կատարվող իրադարձությունները՝ որևէ կարևոր քայլ կատարելու և այդ քայլի հետևանքները պարզ-հստակ պատկերացնելու համար:

– Անհրաժեշտ է նաև ինքն իրեն ճիշտ գնահատելը: Վտանգավոր և աղետաբեր է սեփական անձը, ուժերը ինչպես թերագնահատելը, այնպես էլ՝ դերագնահատելը: Մեկի վերջնակետը թերարժեքության բարդույթն է՝ ծուլությունը, մյուսինը՝ ատելություն-ցասումը՝ ըստ արժանվույն գնահատված չլինելու, անտարբերությունը ամեն ինչի նկատմամբ: Երկուսի արդյունքն էլ ի վերջո՝ սպասիան է՝ կործանումներից վատթարագույնը...

Այսպիսին են, ահա, բանաստեղծի՝ հարազատ ժողովրդի սերունդներին կտակած մշտապես արդիական խորհուրդները ու պատգամները:

ИСТОРИКО-ФИЛОСОФСКАЯ КОНЦЕПЦИЯ "ДУХОВНАЯ АРМЕНИЯ" ВААНА ТЕРЬЯНА

МАРИНЕ САРКИСЯН

Резюме

В статье на основе толкования статей, написанных Вааном Терьяном в 1911–1916 годах, в частности важнейших, десятилетиями замалчиваемых статей – "Наш долг", "Спасители-самозванцы" и известной этапной – "Духовная Армения", а также статьи "Грядущий день армянской литературы" и данных, собранных из писем Терьяна, раскрывается его концепция "Духовная Армения". Представлен гражданско-патриотический портрет Терьяна с характеристикой и оценкой взаимосвязи интеллигенция–народ–партии в горниле

армянской действительности начала XX века, а также обстоятельства, среда, атмосфера формирования концепции "Духовная Армения".

HISTORIC-PHILOSOPHICAL CONCEPTION "SPIRITUAL ARMENIA" OF VAHAN TERYAN

MARINE SARGSYAN

S u m m a r y

In this article on the basis of research interpretation of Vahan Teryan's articles written in 1911-1916 in particular, the most important articles "Our duty", "Rescuers-Impostors", doomed to silence for decades and famous stage "Spiritual Armenia" and also on the basis of the article "The Future Day of Armenian Literature" and facts, gathered from Teryan's letters it is generalized the conception "Spiritual Armenia". It is presented Teryan's civil-patriotic portrait, with interaction description and appreciation of intelligentsia-public and parties in Armenian reality at the beginning of the 20th century with distinct underground questions and attitude and also the facts, environment and atmosphere of conception's forming.